

Կիլիկյան Հայաստանի և Իկոնիայի սուլթանության հարաբերությունների
պատմությունից (13-րդ դարի 40-ական թվականներ)
Արամ Հովհաննիսյան

Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականության պատմության մեջ առանցքային են 13-րդ դարի 40-ական թվականների հայկական թագավորության հարաբերությունները Իկոնիայի սուլթանության հետ: Մինչև այժմ եղած հետազոտություններում երկկողմ հարաբերությունները խորությամբ չեն ուսումնասիրվել, և մի շարք հարցեր դեռևս կարոտ են սպառնիչ ուսումնասիրության: Նշյալ ժամանակաշրջանում մերձավորարևելյան տարածաշրջանի միջազգային հարաբերությունները շարունակում էին մնալ խիստ լարված: Դեռևս հզոր էին Իկոնիայի սելջուկները, և նրանցից որոշակի կախման մեջ էին նաև Կիլիկիայի հայկական թագավորությունը: Հարկ է նշել նաև, որ տարածաշրջանի պետությունները սկսում են լրջորեն վտանգվել մոնղոլական պետության կողմից: Մոնղոլների պետությունը, որը ստեղծվում է 13-րդ դարի սկզբներին, կարճատև ժամանակահատվածում վիթխարի նվաճումներ է կատարում և մոտենում փոքրասիական տարածաշրջանին¹: Նախապես ծանր պարտության մատնելով մի շարք պետությունների՝ մոնղոլներն անմիջական սպառնալիք են դառնում նաև տարածաշրջանի հզոր պետություններից մեկին՝ Իկոնիայի սուլթանությանը: Հայտնի է նաև, որ 1243 թ. հուլիսի 3-ին Քյոսեդաղի Չմանկատուկ (Երզնկայից 15-20 կիլոմետր դեպի արևելք) գյուղաքաղաքի մոտ տեղի է ունենում մի մեծ ճակատամարտ, որը բախտորոշ նշանակություն է ունենում շատ երկրների և ժողովուրդների համար: Կիլիկիայի հայկական թագավորության ներկայացուցիչները տեղի ունեցած ճակատամարտի նախօրեին հրավեր են ստանում Իկոնիայի սուլթան Ղիյասեդդին Քեյ-խոսրով Բ-ից: Այդ հրավերը, բնականաբար, ամրագրվել էր երկու պետությունների միջև 1218 և 1226 թվականներին կնքված պայմանագրերով: Հայոց թագավորության արտաքին գերատեսչության համար ստեղծվում է բարդ իրավիճակ: Նրանք դեռևս չէին կարող մերժել իրենց նկատմամբ գերակայություն ունեցող Իկոնիայի սուլթանության քաղաքական և դիվանագիտական պահանջատիրությունը: Այս պետությունը բավականին հզոր էր և կարող էր պատժել հայերին: Հայոց

¹ Juvaini, The history of the world-conqueror, vol. II, Manchester, 1958, p. 615-632. Այդ մասին տես նաև՝ S. Turnbull, Genghis Khan and Mongol conquests, 1190-1400, Osprey Publishing, 2003, օգտվել ենք books google. com սայթից, վերցված է 3.03.2011 թ., J. Saunders, The history of the Mongol conquests, 2001, օգտվել ենք books google. com սայթից, վերցված է 3.03.2011 թ., D. Morgan, The Mongols, Blackwell publishing, 2007, օգտվել ենք books google. com սայթից, վերցված է 3.03.2011 թ., The Cambridge history of Iran, Cambridge, Cambridge University Press, 1968, p. 342-344, Encyclopaedia Iranica, vol. V, California, 1992, p. 135.

մեծամեծերը զգուշանում էին նաև օրեցօր հզորացող մոնղոլական պետության առաջխաղացումից: Նրանք արդեն մեծ ավերածություններ էին կատարել և աստիճանաբար մոտենում էին Կիլիկիայի հայկական թագավորության սահմաններին: Նման պայմաններում հայ դիվանագետները հայտնվում են անելանելի իրավիճակում: Վերջիններս լավ գիտակցում էին, որ իրենց դարավոր թշնամուն՝ Իկոնիայի սուլթանությանը օգնելը միաժամանակ հարուցելու էր մոնղոլների զայրույթը: Սա մի հանգամանք էր, որ կարող էր չափազանց վտանգավոր լինել Կիլիկիայի հայկական թագավորության հետագա ճակատագրի հարցում: Ինչպես նշում է միջնադարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին, Չեթում արքան խոստանում է Իկոնիայի սուլթանությանն օգնել զորքով, բայց հետագայում չի կատարում իր խոստումը²: Կարծում ենք, որ հայոց արքան այս դիրքորոշմամբ շատ ճիշտ է վարվում, քանի որ տվյալ ժամանակաշրջանը պատեհ էր քաղաքական նոր կողմնորոշում ստանալու համար: Եթե նա սկզբից հակադրվեր Իկոնիայի սուլթանին, ապա վերջինս հնարավորություն կունենար անմիջապես պատժել հայոց արքային: Այդպիսի քաղաքականությամբ հայերը ժամանակ են շահում, որը, մեր կարծիքով, տվյալ պահին ամենակարևորն էր: Ճակատամարտից հետո Իկոնիայի սուլթանությունն այնքան կորուստներ կունենար, որ մտածելու էր միայն իր պետության նախկին հզորությունը պահպանելու մասին:

Ի վերջո, տեղի է ունենում Քյոսեդաղի նշանավոր ճակատամարտը, որը նշյալ ժամանակաշրջանում Մերձավոր և Միջին Արևելքի երկրների կյանքում ամենակարևոր քաղաքական իրադարձությունն էր: Այս ճակատամարտի ելքից էր կախված նաև Կիլիկյան Հայաստանի հետագա ճակատագիրը և գոյությունը: Հայերը, չօգնելով Իկոնիայի սուլթանությանը, համարձակ քայլի էին գնում, բայց հետագա տարիները ցույց են տալիս, որ նրանց դիվանագիտական հաշվարկները և դիրքորոշումները ճիշտ են գտնվում: Ճակատամարտում մոնղոլական զորքերը փոքրաթիվ էին, բայց կարողանում են հաղթել Իկոնիայի սուլթանության զորքերին: Այս ճակատամարտի ելքով վերջ է տրվում նրանց քաղաքական հզորությանը Փոքր Ասիայում³: Ինչ վերաբերում է Կիլիկիայի հայկական թագավորության և Իկոնիայի

² Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 282:

³ The Seljuk Han of Anatolia, History of the Anatolian seljuks, օգտվել ենք [www. Turkishhan. Org/history.htm](http://www.Turkishhan.Org/history.htm) սայթից, վերցված է 3.03.2011 թ., C Mutafian, The brilliant Diplomacy of Cilician Armenia, Armenian Cilicia, Edited by R. Hovhannisyann and S. Payaslian, California, 2008, p. 105, Կ. Սուրաֆյան, Կիլիկիան կայսությունների խաչմերուկում, Երևան, 2001, էջ 416, Ա. Խաչատրյան, Աբուլ-Ֆարաջ Գրիգորիս իբն ալ-իբրիի պատմագրական երկերը որպես Կիլիկյան Հայաստանի XIII դարի պատմության սկզբնաղբյուր, Մերձավոր և միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XVII, Երևան, 1988, էջ 151, Գ. Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007, էջ 301, The encyclopaedia of Islam, Vol. II, London, 1960, p. 36, B. Spuler, The Muslim World, Part II, Leiden, 1960, p. 27, The Cambridge history of Iran, Vol. V, Cambridge, 1968, p. 338, D Ohsson, Histoire des Mongols, Vol. III,

սուլթանության հարաբերություններին, ապա տևական ժամանակ դրանք սուր և թշնամական բնույթ են ստանում: Բացի այն, որ Յեթում արքան չի օգնում Իկոնիայի սուլթանին Քյոսեդաղի ճակատամարտում, շուտով նա կատարում է մի քայլ ևս, որից հետո հարաբերություններն ավելի են սրվում:

Սելջուկների պարտությունից հետո հայ դիվանագետները որոշում են զինական համագործակցության մեջ մտնել մոնղոլների հետ, որպեսզի հայկական թագավորությունը զերծ մնա նրանց հարձակումներից: Քաղաքական այս կարևոր իրադարձությունների վերաբերյալ ճշգրիտ տեսակետ է հայտնում Ա. Գալստյանը. «Չունենալով ոչ մի դաշնակից՝ Կիլիկյան հայկական պետությունը, ելնելով իր երկրի շահերից, նպատակահարմար գտավ ոչ թե պատերազմի դուրս գալ մոնղոլների դեմ, այլ բանակցություններ վարեց նրանց հետ: Կիլիկիայի հայկական թագավորության այդ քաղաքականությունը նպատակահարմար էր ոչ միայն այն պատճառով, որ նա չէր կարող լուրջ դիմադրություն կազմակերպել մոնղոլների գերազանց ուժերի դեմ, այլ նաև այն պատճառով, հայերին լուրջ վտանգ էին սպառնում նախ և առաջ իրենց հարևան մահմեդական տերությունները, որոնք արդեն հաշվեհարդար էին տեսել խաչակիրների արևելյան կոմսությունների հետ և հարմար առիթ էին սպասում հարձակվելու Կիլիկյան Չայաստանի վրա»⁴: Այդ մասին է վկայում նաև Գ. Նազարյանը իր հետազոտության մեջ⁵: Եվ բացի այդ, դիտարկվող ժամանակաշրջանում մոնղոլները կրոնի հարցում դեռևս անորոշության մեջ էին և եզրակացության չէին եկել՝ ընդունել մահմեդականությունը, թե քրիստոնեությունը: Չայերը պատվիրակություն են ուղարկում մոնղոլական հրամանատարության մոտ և առաջարկում բարեկամության և դաշնակցային համագործակցություն: Կիլիկիայի հայոց արքայի՝ Յեթում Ա-ի այդ քայլը բխում էր Կիլիկիայի հայկական թագավորության և ժողովրդի շահերից: Մոնղոլական հրամանատարությունը, դեմ չլինելով հայերի առաջարկին, պահանջում է, որ հայոց արքան իրենց հանձնի Իկոնիայի սուլթանի ընտանիքի անդամներին՝ կանանց, աղջիկներին և բոլոր այն անձանց, որոնք ապաստան էին գտել Կիլիկիայի հայկական թագավորությունում: Բնականաբար, հայոց արքայի համար ստեղծվում է բավականին ծանր իրավիճակ, քանի որ մարդկային առումով դժվար կլիներ նրանց հանձնել մոնղոլ հրամանատարությանը: Չասկանալի էր նաև այն, որ այլ տարբերակ նույնպես չի կարող: Այդ մասին վկայում է պատմիչ Կիրակոս Գանձակեցին: Չամաձայն նրա

Amsterdam, 1852, p. 81, Проблемы истории Турку, Москва, 1978, с. 12, Դ. Երեմեև, Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 164:

⁴ Ա. Գալստյան, Սմբատ Ապարապետ, Երևան, 1961, էջ 43:

⁵ G. Nazaryan, Armenian Cilicia From Antiquity To The Middle Ages The Bridgehead of East And West, Revue Bazmavep, Venise, 2008, p. 329.

հայոց արքան ընկել էր շատ ծանր վիճակի մեջ. « Եւ իբրև լուաւ արքայ Յեթուն, յոյժ տրտմեցաւ և ասէ. « Լաւ էր ինձ, եթէ զորդի իմ՝ զԼևոն, խնդրեալ էին, յինէն, քան թէ զնոսա»⁶: Եվ ընդհանրապես, Կիրակոս Գանձակեցին, որը նշյալ ժամանակաշրջանում գտնվում էր մոնղոլական գերության մեջ և թարգմանիչ էր, շատ բովանդակալից ու կարևոր հաղորդումներ է տրամադրում: Նշյալ խնդրի մասին խոսում է նաև այդ իրադարձությունների ականատես Սմբատ Սպարապետը: Վերջինս

իր աշխատության մեջ հաստատում է, որ Իկոնիայի սուլթանի ընտանիքը, իրոք, ապաստանել էր Կիլիկյան Չայաստանում, ապա ավելացնում է, որ մոնղոլական հրամանատարության պահանջից հետո Յեթունը, վախենալով մոնղոլական զորքերի՝ հայկական թագավորության սահմանները մտնելուց, հանձնում է սուլթանի ընտանիքը թշնամուն. «Եւ թաթարն յուղարկեց ի հետ ի Յեթուն թագաւոր, թէ տուր զփախստականդ, թէ չէ քո ամէն սէրն, որ հետ մեզ դրիր, նա սուտ է: Նա վախեցին, որ Թաթարն չլցուէր յերկիրս, տուին»⁷: Հետոզոտվող խնդրի շուրջ խոսում է նաև ասորի պատմիչ Աբուլ Ֆարաջը (Բար Յեբրաուս), որը դատապարտում է Յեթունի վարքագիծը⁸: Միջնադարյան մյուս պատմիչներից Սամվել Անեցի⁹, Գրիգոր Ակներցի¹⁰, Յեթուն պատմիչը¹¹, ինչպես նաև արաբական աղբյուրները¹² խոսում են հայ-մոնղոլական և հայ-սելջուկյան հարաբերությունների մասին, սակայն ոչ նշում են սուլթանի ընտանիքի հանձման փաստը, ոչ էլ որևէ գնահատական տալիս դրան: Ինչպես նկատում ենք, եթե միջնադարի հայ պատմիչներն ընդամենը ներկայացնում են կատարված եղելությունը և փորձում արդարացնել հայոց արքայի այդ արարքը, ապա ասորի պատմիչ Աբուլ-Ֆարաջը, որը չեզոք պատմիչ է, մեղադրանք է ներկայացնում հայոց արքային:

Ուսումնասիրվող խնդիրը մասնակիորեն քննարկվել է նաև պատմագիտական գրականության մեջ: Կան գիտնականների մի խումբ, որոնք խոսում են նշված շրջանի ռազմաքաղաքական իրադարձությունների մասին, սակայն ձեռնպահ են մնում որևէ մեկնաբանություն կատարել¹³: Իսկ գիտնականների մի այլ խումբ տարբեր գնահատականներ է տալիս խնդրի առնչությամբ:

⁶ Կիրակոս Գանձակեցի, էջ 285:

⁷ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 226-227:

⁸ Bar Habraeus, The Chronography, London, 1932, p. 476:

⁹ Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 150:

¹⁰ Գրիգոր Ակներցի, Պատմութիւն թաթարաց, Յերուսաղէմ, 1970, էջ 30-32:

¹¹ Յեթուն պատմիչ, Թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 36-39:

¹² Արաբական աղբյուրները Չայաստանի և հարևան երկրների մասին, թարգմանեց Հ. Նալբանդյանը, Երևան, 1965, էջ 235:

¹³ Լ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում, Երևան, 1964, էջ 211, Ս. Բոռնազյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. Գ, ակադեմիական հրատարակություն, Երևան, 1976, էջ 700:

Մասնավորապես Կ. Մուբաֆյանը կարծիք է հայտնում, որ արքայի արարքը տրամաբանական էր և դատապարտելի¹⁴: Կարծում ենք՝ հեղինակը տրամաբանական է համարում այն փաստը, որ հանձնելով կանանց՝ ապահովեց մի ամբողջ ժողովրդի և երկրի անվտանգությունը, իսկ «դատապարտելի» ասվածում, ամենայն հավանականությամբ, նկատի ունի արքայի ոչ մարդկային արարքը: Հիշյալ խնդրին անդրադարձել է նաև Ս. Տեր-Ներսիսյանը, ինչպես նաև ճանաչված պատմաբան Վ. Գորդլևսկին: Ըստ նրանց, Փոքրիկ Հայաստանը, հրաժարվելով արևելյան հյուրընկալությունից, մոնղոլներին է հանձնում Ղիյաս էդ-դինի կնոջը և դստրերին¹⁵: Բարձր գնահատելով հեղինակների վաստակը պատմագիտության մեջ՝ չենք կարող համաձայնել նրանց հետ, քանի որ խոսքը ոչ թե հյուրընկալության, այլ հազարավոր մարդկանց կյանքի անվտանգության մասին է: Չմոռանանք նաև, որ նախորդ տասնամյակներում ինչպիսի խնդիրներ էր ստեղծել Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը հայկական թագավորության համար: Առավել ճշգրիտ կարծիք է հայտնում գիտնական Ֆ. Ուսպենսկին, համաձայն որի՝ Հեթումի ճիշտ քաղաքականության շնորհիվ բարեկամություն է հաստատվում մոնղոլների հետ¹⁶: Հետազոտողը նշում է նաև, որ Կիլիկիայի հայկական թագավորությունը չէր կարող սեփական երկիրը վտանգի ենթարկել¹⁷: Խոսքը ոչ թե հյուրասիրության, այլ մի ողջ ժողովրդի լինել, չլինելու հարցն էր: Ֆ. Ուսպենսկու տեսակետը ընդունում են նաև Կիլիկյան Հայաստանի ճանաչված մասնագետներ Գ. Միքայելյանը¹⁸, Ա. Գալստյանը¹⁹ և Մ. Օրմանյանը²⁰, որոնք նշում են, որ հայոց արքայի կատարած քայլը ճշգրիտ էր և բխում էր հայոց պետականության և սեփական ժողովրդի շահերից:

Ճիշտ է, առաջին հայացքից հայոց արքայի վարմունքը կարող է ոչ մարդկային արարք դիտվել: Խորը դատելով խնդրի էությունը՝ կարող ենք ասել, թե արդյոք հայոց թագավորության ղեկավարության համար կար այլ տարբերակ ևս: Կարծում ենք՝ չկար. կամ հայերը պետք է մոնղոլներին հանձնեին Իկոնիայի սուլթանի ընտանիքը և ապահովեին հայոց պետության սահմանների անվտանգությունն օրեցօր հզորացող մոնղոլ նվաճողներից, կամ էլ մերժելով մոնղոլների պահանջը՝ հարձակման ենթարկվեին թշնամու կողմից: Թե ինչի էին ընդունակ այդ ժամանակաշրջանում մոնղոլական զորքերը, կարծում ենք բոլորին է հայտնի:

¹⁴ Կ. Մուբաֆյան, նշվ. աշխ., էջ 417:

¹⁵ В. Гордлевский, Государство Сельджукидов Малоу Азису, Москва, 1937, с. 36, Ս. Տեր-Ներսիսյան, Կիլիկյան Հայաստանի թագավորությունը, հղումը կատարված է Լ. Տեր-Պետրոսյանի Խաչակիրները և հայերը աշխատությունից, հ. Ա, Երևան, 2005, էջ 404:

¹⁶ Ф. Успенски, История Византийского империи, т. 3, Москва, 1946, с. 605.

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Գ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 302:

¹⁹ Ա. Գալստյան, նշվ. աշխ., էջ 47:

²⁰ Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Էջմիածին, 2001, սյուն 1896-1897:

Ուսումնասիրելով հայ և օտարազգի աղբյուրները, ինչպես նաև քննելով ժամանակակից գիտական գրականության մեջ առկա տեսակետները՝ գալիս ենք այն եզրակացության, որ Կիլիկիայի հայոց արքան ճիշտ քաղաքական քայլ է կատարում՝ Իկոնիայի սուլթանի ընտանիքը հանձնելով մոնղոլական զորքերի հրամանատարությանը:

Փաստորեն, 13-րդ դարի 40-ական թվականների կեսերին Կիլիկյան Չայաստանի արտաքին քաղաքականության մեջ կատարվում է կտրուկ շրջադարձ: Չայերը, որ բավականին ժամանակ գտնվում էին Իկոնիայի սուլթանության գերիշխանության ներքո, վերջնականապես ազատվում են այդ մահմեդական պետության գերակայությունից: Ճիշտ է՝ հետագա տասնամյակներին շարունակվում են հայկական թագավորության և Իկոնիայի սուլթանության հարաբերությունները, սակայն տարբերությունն այն էր, որ Քյոսեդաղի ճակատամարտից հետո Իկոնիայի սուլթանությունը հայկական թագավորության պես ունենում էր նույն գերական, և նրանց կարգավիճակները հավասարվում էին: Բացի այդ, ինչպես նշում է ճանաչված պատմաբան Ա. Միլլերը, Քյոսեդաղի ճակատամարտի ավարտից հետո ոչ միայն թուլանում է Իկոնիայի սուլթանությունը, այլև գյուղատնտեսությունը կազմալուծվում է, սով է սկսվում, և մեծ քանակությամբ մարդիկ սկսում են գաղթել դեպի բյուզանդական սահմանը²¹:

Կարևոր ենք համարում նաև նշել, որ 1243-1244 թվականներին Կեսարիայում հայ-մոնղոլական բանակցություններն ավարտվում են որոշակի դիրքորոշմամբ. վերջնական պայմանագիր կնքելու համար հայոց թագավորության ղեկավարությունը պետք էրկարատև ճանապարհորդություն կատարեր մոնղոլական պետության մայրաքաղաք Կարակորում: Սակայն այս և հետագա մի քանի տարիների ընթացքում Կիլիկյան Չայաստանի և Իկոնիայի սուլթանության հարաբերությունները վերաճում են պատերազմի և, հավանաբար, այդ էր պատճառը, որ հայոց արքան տևական ժամանակ չի կարողանում մեկնել Մոնղոլիա: Խնդիրն այն է, որ Քյոսեդաղի ճակատամարտից հետո՝ դեռ մի քանի տարի, մոնղոլական զորքերը զբաղվում են արտաքին նվաճումներով և, դրանով պայմանավորված, չէին օգնում հայերին: Այդ փաստը գիտակցում էին նաև Իկոնիայի սելջուկները, որոնք որոշում են պատժել հայերին: Շուտով հայկական թագավորության համար մի այլ բացասական և վտանգավոր հանգամանք է ստեղծվում: Իկոնիայի սուլթանի հետ դաշնակցում է նաև Կիլիկիայի Կոստանդին Լամբրոնացի իշխանը: Նա թշնամացել էր Չեթունյանների հետ: Սրա պատճառն այն է, որ Չեթուն արքան զրկել էր այդ իշխանին ունեցած իրավունքներից և ամրոցներից: Իսկ վերջինս, օգնական զորք ստանալով Իկոնիայի

²¹ А. Ф. Миллер, Краткая история Турции, Москва, 1948, с. 8.

սուլթանից երկու անգամ, 1245 և 1246 թվականներին առաջնորդում է թշնամու զորքերը Կիլիկյան Հայաստանի սահմանները՝ մեծ վնաս հասցնելով երկրին.« Ապա գնացեալ Կոստանդնի ի Կօնն, առեալ զօրս սուլտանին հռոռնոց, որք յայնժամ թշնամիք էին արքայի, զի ետ զմայր սուլտանինհռոռնոց ի թաթարն, զայ յեղակարծ ժամու, մինչդեռ ցրուեալ էին զօրքն արքունի իւրաքանչիւր տեղիս, և մտեալ յաշխարհն՝ աւերեաց զբազում ականս և զագարակս այրմամբ և սպանմամբ և գերութեամբ և զբազում քրիստոնէայս կոտորեալ և կողոպտեալ...»²²:

Այսպես, դեպքերի ժամանակակից պատմիչ Սմբատ Սպարապետը հետևյալ կերպ է նկարագրում թշնամու 1245 թ. արշավանքը. «Նա ռխացաւ սուլտանն Քայ Խոսրու Շահն եւ ամէն Տաճկունք, ժողովեաց հեծեալ, և առաջնորդութեամբ պարոն Կոստանդէայ Լամբրոնի տիրոջն, մտաւ ընդ Պապառոնին լեառն ի վայր ու այրեաց զամէնն: Եւ թագաւորահայրն պարոն Կոստանդին և Սմբատ Գունդստաբլն եկին մտան ի Տարսուս, եւ թագաւորն իւր հեծելովն կայր ի յԱտանայ: Թուրքն սղարեց զՏարսուս, իջան ի դարոտն հետ գետին, գերեցին զամէն երկիրն եւ կեցան վեց օր, եւ ապա ել ածին, որ ելնէին ընդ Կուկկայ Կապանն»²³: Ամբատ Սպարապետի տեղեկությունը վկայում է նաև պատմիչ Կիրակոս Գանձակեցի²⁴: Կարևոր ենք համարում նշել, որ սելջուկների ներխուժման ժամանակ մոնղոլները իրական օգնություն ցույց չեն տալիս Կիլիկիայի հայկական թագավորությանը, իսկ նրանց դիվանագիտական միջնորդությունը և ճնշումը անարդյունք է լինում սելջուկների վրա: Նույն պատմիչի հաղորդմամբ՝ հաջորդ տարի թշնամու մեծաքանակ զորքերը կրկին ներխուժում են Կիլիկիայի հայկական թագավորության սահմանները՝ այս անգամ պաշարելով Կապանը և Տարսոնը²⁵: Նրա գրառած տեղեկությունները հաստատում է նաև Հեթում Ախտուց Տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները²⁶: Ցավոք, միջնադարյան մյուս պատմիչները, որոնք խոսում են այս ժամանակաշրջանի ռազմաքաղաքական իրադարձությունների մասին, գրեթե ոչինչ չեն նշում այդ արշավանքի մասին: Ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ առկա են նաև կցկտուր հետազոտություններ:

Ա. Ալպոյաճյանը կարծիք է հայտնում, որ հայոց արքան այդ ժամանակ ստիպված էր հաշտության փոխարեն Իկոնիայի սուլթանությանը զիջել Պրականա ամրոցը²⁷: Նշյալ ամրոցի հանձնման մասին խոսում է նաև Կիլիկյան Հայաստանի

²² Կիրակոս Գանձակեցի, էջ 303:

²³ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 227:

²⁴ Կիրակոս Գանձակեցի, էջ 287-288:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Հեթում Ախտուց Տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, Պատմա-բանասիրական հանդես, 1963, N 4, էջ 190:

²⁷ Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Գահիրէ, 1937, էջ 517:

ճանաչված հետազոտող Գ. Միքայելյանը²⁸: Ամենայն հավանականությամբ, հայոց արքայի այս դիրքորոշումն ուներ հատուկ նպատակ, այսինքն՝ կասեցնել թշնամու առաջխաղացումը և վերակազմավորել ուժերը:

Պետք է նշել մի շատ կարևոր հանգամանք, որը, ցավոք, հայոց արքան ուշ է իմանում: 1246 թ. Կիլիկյան Հայաստանի և Իկոնիայի սուլթանության բախումների ժամանակահատվածում իր ամրոցներից մեկում մահանում է Իկոնիայի սուլթան Ղիյաս էդ-դին Քեյ-խոսրով Բ-ն: Այնուհետև այդ պետության ներսում սուլթանի որդիների միջև պայքար է սկսվում՝ գահին տիրելու համար²⁹: Եվ հայկական թագավորության վերնախավը, չիմանալով սուլթանի մահվան հանգամանքը, հաշտության փոխարեն թշնամուն է հանձնում Պրականա ամրոցը³⁰: Այդ մասին խորը ավստսանք է հայտնում նաև այդ ժամանակների պատմիչը՝ Սմբատ Սպարապետը, և նշում, որ իրենց իմանալու դեպքում զիջում չէր լինելու .«Եւ չէաք իմացեր զսուլտանին մահն, զի կարեաք նեղել...»³¹: Բացի վերը նշված ամրոցի հանձնումից, միջնադարյան աղբյուրներում չկան տեղեկություններ այն մասին, թե արդյոք այլ դրույթ ևս եղել է նշյալ պայմանագրում: Ժամանակակից հետազոտողների ուսումնասիրություններում էլ նշված խնդրի մասին որևէ ուսումնասիրություն չկա: Ուսումնասիրության ոչ բավարար վիճակը, հավանաբար, աղբյուրների կցկտուր լինելն է: Այս շրջանից սկսած՝ Իկոնիայի սուլթանությունը սկսում է թուլանալ, որը չափազանց բարենպաստ էր Կիլիկիայի հայկական թագավորության համար:

Ըստ ամենայնի՝ կարելի է եզրակացնել, որ թեև 13-րդ դարի 40-ական թվականներին Կիլիկիայի հայկական թագավորությունը փոխում է իր արտաքին քաղաքական կողմնորոշումը և դաշնակցում ավելի ուժեղ պետության հետ, այնուամենայնիվ հայերը ստիպված էին որոշակի կորուստներ ունենալ սկզբնական շրջանում: Կիլիկիայի հայկական թագավորությունը հետագա տարիներին դիմագրավում է դեռևս բավականին հզոր ուժ ներկայացնող թշնամուն: Այդ մասին է վկայում այն փաստը, որ 1249-1250 թվականներին հայկական թագավորության զորքերը կարողանում են վերջնական հաղթանակ տոնել Իկոնիայի սուլթանության դեմ մղվող պատերազմում: Շուտով սպանվում է նաև խռովարար իշխան, Լամբրոնի տեր Կոստանդին Լամբրոնացին, որի մահից հետո իրավիճակը ավելի է հանդարտվում: Այդ կարևոր իրադարձության մասին մեզ արժեքավոր տեղեկություն են հաղորդում ժգ դարի հիշատակարանները, որոնք ոչ միայն փաստում են այդ

²⁸ Գ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 304:

²⁹ Босворн, Мусулманские династии, Москва, 1971, с. 180.

³⁰ Պրականա ամրոցը Ճովային Կիլիկիայի բերդերից է, Սելևկիայի հյուսիսային կողմերում: Այդ մասին տես նաև՝ Դ. Մ. Յովհաննեսեան, Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքները, Վենետիկ, 1989, էջ 401:

³¹ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 228:

դավաճան իշխանի մահը, այլև հստակ նշում, թե երբ է այն տեղի ունեցել.. «Ի թվին Չայոց ԶԳՂԹ (1250), ի յունիս ԻԹ (29) սպանին զպարոն Չեթունն տեր Լամբրոնին...»³²: Այս տեղեկությունը միակն է հայկական և օտար աղբյուրների մեջ, որում հստակ նշվում է, թե ստույգ երբ է տեղի ունեցել այդ սպանությունը: Շատ հավանական է, որ Կոստանդին Լամբրոնացին սպանվեց հենց հայոց արքայի խորհրդով: Եվ այդ մասին է վկայում նաև հայտնի հայագետ Ղ. Ալիշանը, որը շատ ճիշտ տեսակետ է հայտնում՝ նշելով, որ հայոց արքան չէր կարող վստահ լինել նրա հանդեպ և չէր բացառվում, որ Կոստանդին Լամբրոնացին ապագայում նոր խնդիրներ ստեղծեր հայոց թագավորության համար³³:

Այսպիսով, 13-րդ դարի 40-ական թվականներին Կիլիկյան Չայաստանի պայքարն Իկոնիայի սուլթանության դեմ ավարտվում է հաջողությամբ: Չայկական թագավորությունը դադարում է Իկոնիայի սուլթանության վասալը լինելուց: Բացի այդ, հայերը, դաշնակցելով ոչ մահմեդական պետության հետ, թագավորության անվտանգությունն էլ ավելի ամուր են դարձնում և նույնիսկ հնարավորություն են ունենում ապագայում տեղի ունեցող արշավանքների շնորհիվ ընդարձակել իրենց պետության սահմանները: Եվ այս ամենը կատարվում է Կիլիկյան Չայաստանի արտաքին քաղաքականության պետական մարմինների ճիշտ գործունեության ու համառության արդյունքում:

Резюме

В статье впервые исследуются и анализируются взаимоотношения Киликийской Армении и султанства Иконии в период 40-ых годов 13 века. Особое внимание уделено рассмотрению истории внешней политики армянского царства в указанный период. Сделаны очень важные наблюдения о битве Кёседаг и о новой политике, которой придерживалось армянское царство. Тщательнейшим образом представлены и доказаны факты союза царя Гетум с монгольским государством, усиливающимся день ото дня. В конце статьи рассмотрен новый этап взаимоотношений Киликийской Армении и султанства Иконии и описаны успехи и победы армянского царства на военном поприще.

Summary

The article gives a thorough study to the relationships between Cilician Armenia and the Sultanate of Ikonion in the 40s of the XIII century. Special attention is allocated to the foreign policy carried out by the Armenian Kingdom. There has been made important conclusions on the Kyusedagh battle and the new policy undertaken by the Armenian

³² Չայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դարի, Կազմեց Ա. Մաթևոսյանը, Երևան, 1986, էջ 705:

³³ Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 554:

Kingdom. The article gives detailed approvals on the reasons of the agreement signed between King Hetum and the Mongols. At the end of the article the new stage of the relationships between the Cilician Armenia and the Sultanate of Ikonian as well as the achievements and victories in the battle-fields reached by the Armenian Kingdom is elucidated.

Բանբեր Երևանի համալսարանի 2012թ.